

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Գույքի ապահովագրությունը հիանալի միջոց է պաշտպանելու Ձեր անշարժ գույքը և կանխելու խոշոր ֆինանսական կորուստները հրդեհից, բնական աղետներից և այլ վտանգներից:



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1  
Հեռ.՝ (+374 60) 50 57 57  
Կայք՝ www.reso.am



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ

- Հրդեհ, կայծակի հարված, պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս,
- Բախում, հարված,
- Տարերային աղետներ, այդ թվում՝ երկրաշարժ, փոթորիկ, մրրիկ, մրրկասյուն, ուժգին քամի, որի արագությունը գերազանցում է 17,2 մ/վ, տայֆուն, ջրհեղեղ, սողանք, ստորգետնյա, լեռնային վանգվածների ոչնչացում և փլուզում, կարկուտ, հորդառատ անձրևներ և առատ ձյուն, հեղեղում, մթնոլորտային տեղումներ, սելավ, ձևահոսք, քարահոսք և տվյալ տեղանքի համար անսովոր բնության այլ երևույթներ,
- Կտրանքով գողություն, կողոպուտ, ավազակություն,
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ:



### ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

Համաձայն վարկային պայմանագրի՝ Ձեր կողմից ապահովագրավճար չի վճարվում:



### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններին ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 15.05.2018թ.-ին հաստատված «Ֆիզիկական անձանց պատկանող գույքի հրդեհից, բնական աղետներից և այլ վնասներից ապահովագրության պայմաններ»-ում՝ այցելելով ապահովագրական ընկերության պաշտոնական կայքը:



### ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

Ապահովագրության վկայագիրը կնքվում /վերանկնքվում է վարկի գործողության ողջ ժամկետում բացառությամբ վարկային պայմանագրով սահմանված դեպքերի:



### ՈՐՔԱՆ Է ՀՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ

- Յուրաքանչյուր դեպքի համար՝ ապահովագրական գումարի 1%,
- Երկրաշարժի դեպքում՝ ապահովագրական գումարի 2%:



### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԶԱՓԸ

Կարգավորվում է Ձեր վարկային պայմանագրով և/կամ հրապարակային օֆերտայով սահմանված պայմաններով:



### ԻՆՉ ՔԱՅԼԵՐ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԶԵՌՆԱՐԿԵԼ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ

- Պատահարի տեղի ունենալուց կամ հայտնի դառնալու պահից հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում անհրաժեշտ է վանգահարել (+374 60) 50 57 57 հեռախոսահամարով,
- Պատահարի մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմնին (գողության, կտրանքի, թալանի կամ երրորդ անձանց կողմից գույքի կանխամտածված (միտոմնավոր) ոչնչացման կամ վնաս հասցնելու դեպքում՝ Ոստիկանություն, հրդեհի դեպքում՝ ԱԻՆ և այլն),
- Զեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ապահովագրության օբյեկտի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,
- Կատարել ապահովագրական ընկերության ցուցումները:

## ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Պատահարի մասին ապահովագրական ընկերությանը տեղեկացնելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերության գրասենյակում լրացնել հայտային դիմումը կամ լրացված դիմումի լուսապատճենը կամ լուսանկարն ուղարկել claims@reso.am էլ. հասցեին,
- Ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերը,
- Սպասել ապահովագրական ընկերության հետագա ցուցումներին,
- Հատուցման կամ մերժման որոշումը կայացվում է հայտի կարգավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում,
- Հատուցման գումարը վճարվում է հատուցման որոշում կայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

## ՈՐ ԴԵՊՔԵՐԸ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԵՆ

Ցանկացած պարագայում, հատուցման ենթակա չեն այն վնասները, որոնք առաջացել են հետևյալի արդյունքում.

- Սահմանված ժամկետում ապահովագրական ընկերությունը և համապատասխան իրավասու մարմինները չեն տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,
- Ապահովագրության պայմանագրով և/կամ ապահովագրության պայմաններով նախատեսված Ձեր պարտականությունները չեն կատարվել,
- Գույքի սեփականատիրոջ/լիազորված օգտագործողի կողմից խախտվել են ապահովագրության պայմաններով սահմանված պարտավորություններից որևէ մեկը, ինչի արդյունքում հնարավոր չի եղել որոշել ապահովագրական պատահարի հանգամանքները կամ պատճառը կամ հնարավոր մեղավոր անձանց կամ վնասի չափը,
- Ապահովագրված գույքի ինքնահրկիվման, կոռուպիայի, փտման, խմորման, բնական մաշվածության կամ այլ բնական հատկությունների արդյունքում առաջացած վնասը,
- Կոնստրուկցիաների քանդվելու, շենքերի, շինությունների, կառույցների կամ դրանց մասերի փլման արդյունքում ապահովագրված գույքին պատճառված վնասը, եթե դա չի առաջացել ապահովագրական պատահարի հետևանքով,
- Ռազմական գործողությունների, զորաշարժերի, միջոցառումների, քաղաքացիական պատերազմի, հասարակական ընդվզումների, գործադուլների, ազդրավման, բռնագրավման, աշխատանքի ընդհատման, ձերբակալության, քաղաքացիական կամ ռազմական իշխանությունների կարգադրությամբ գույքի ոչնչացման կամ վնասման, հատուկ կամ արտակարգ դրության հայտարարման հետևանքով առաջացած վնասը,
- Միջուկային պայթյունի, ռադիացիայի կամ ռադիոակտիվ վարակման հետևանքով առաջացած վնասը,
- Հրաժարվել էք ապահովագրական ընկերության կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ Ձեր պահանջի իրավունքից և չեք փոխանցել բոլոր փաստաթղթերն ու ապացույցները, որոնք անհրաժեշտ են Ապահովագրական ընկերությանը իրեն անցած պահանջի իրավունքի իրականացման համար,
- «ՌԵՍՈ» ԱՓԲԸ Խորհրդի կողմից 15.05.2018թ.-ին հաստատված «Ֆիզիկական անձանց պատկանող գույքի հրդեհից, բնական աղետներից և այլ վնասներից ապահովագրության պայմաններ»-ով սահմանված այլ դեպքերում:

## ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

- Շարժական գույքին (կահույք, տեխնիկա և այլն) պատճառված վնասները չեն հատուցվում,
- Ապահովագրական ընկերության հատուցման որոշման հետ համաձայն չլինելու դեպքում Դուք իրավունք ունեք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին, Կենտրոնական բանկ, Դատարան/Արբիտրաժային դատարան: